

ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒԽՏԻ ԽՈՍՔԸ ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԻ ԱՌՋԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (27 հոկտեմբեր, 1999 թ.)

«Ամենապատիվ Սրբազան Հայրեր, սիրելի հոգևոր եղբայրներ, սիրելի բարեպաշտ հավատացյալ հայորդիք, Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի սիրելի մասնակիցներ:

Այս պահին փառք և գոհություն եմ ուզում առ Ամենակալն բարձրացնել, որ արժանի դարձրեց ինձ այս մեծ շնորհին, սրբազումար Ժողովի պատգամավորների վստահության քվեով կոչեց շարունակելու Հայոց Հայրապետների շարքը՝ որպես 132-րդ գահակալ Լուսավորչի Սրբազան Աթոռի: Ինքնամատուցումը անձիս այս գահին, խոնարհումը պարանոցիս Հայրապետական ծանր լուծին երբեք չի եղել այն զգացումով, թե ունեմ համապատասխան լիարժեք արժանիքներ, այլ եղել է հավատքս և վստահությունս Ամենակալ զորակցության և օգնականության նկատմամբ, եղել է վստահությունս իմ ժողովրդի սիրո հանդեպ, սիրո հանդեպ դեպի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին: Եղել է վստահությունս իմ առավել փորձառու հոգևոր եղբայրների նկատմամբ՝ ի գլուխ այնոցիկ հայոց նվիրապետական Աթոռների գահակալները՝ Մեծի Տանն Կիլիկիո միաբանությունը՝ Կաթողիկոս Արամ Ա Հայրապետով, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանությունը՝ Թորգոմ Սրբազան Պատրիարքով, Կոստանդնուպոլսո հայոց Պատրիարքությունը՝ իր եկեղեցականաց դասով՝ ի գլուխ Մեսրոպ Սրբազան Պատրիարքով, որոնց հետ եղբայրաբար, ծառայության ոգով, նվիրումով, հավատքի գործերով պիտի գանք վերստին Հայոց Եկեղեցին հայու հոգում կերտելու, հաստատելու, զորացնելու և պայծա-

ռացնելու, որպեսզի Հայ Եկեղեցին՝ Լուսավորչի Աթոռը, դառնա օրհնություն մեր ողջ ժողովրդի համար ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

Նոր հանգամանքի մեջ իմ անդրանիկ աղոթքն ուզում եմ բարձրացնել լուսահոգի Հայրապետների, առանձնապես Վազգեն Վեհափառ Հայրապետի և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար, որոնց հոգեզավակն եմ եղել և որոնց երախտընկալն եմ այսօր: Ես հավատում եմ, որ Հայոց Հայրապետների լույս հոգիները ուղեկից են լինելու ինձ գործունեությանս ողջ ընթացքին: Ու անսալու եմ նրանց խորհուրդներին, խոսելու եմ նրանց հետ, սպանալու եմ օրհնություն, ուղղություն մեր Եկեղեցու ղեկավարման, մեր հավատացյալ ժողովրդի առաջնորդության ճանապարհին: Իմ աղոթքս ուզում եմ բարձրացնել նաև հանգուցյալ մորս հոգվույն համար, հորս համար, որ ապրում է, որովհետև աստվածճանաչողության, հոգևոր կյանքի առաջին սերմերը նրանք է, որ դրել են իմ հոգու մեջ՝ ծնրադիր առաջնորդելով ինձ դեպի այս Սուրբ Սեղանը Միածնաէջ, որի առջև աղոթում էի մի «Հայր մեր», որ հայրս փակավին այսօր առ Աստված է բարձրացնում, ոչ այն, որ ինքս եմ սովորել, ինքս եմ աղոթում, այլ այն, որ ինքնուս իր սրտի խոսքն էր «Հայր մեր»-ի փարբերակով և որը որպես աղոթք ուսուցանել էր մեզ՝ Աստծո հետ հարաբերվելու, Աստծո հետ հաղորդակցվելու, Աստծո օրհնությունը հայցելու: Իմ աղոթքն առ Աստված ես ուզում եմ բարձրացնել մեր Եկեղեցու, Նվիրապետական մեր Աթոռների և մեր ողջ եկեղեցականության ու հավատացյալ ժողովրդի համար, որպեսզի Աստծո ամենազոր հովանու ներքո ապրեն Հայոց խաղա՛ղ-խաղաղ երկնքի փակ, իրենց արդար քրտինքով լծված շինարարական աշխատանքի՝ հայրենիքը շենացնելու, երկիրը զորացնելու և մեր բարօր, երջանիկ կյանքը կերտելու:

Այս պահին նորընտիր Վեհափառ Հայրապետը տեղեկացավ Ազգային Ժողովում տեղի ունեցած ողբերգական դեպքերի մասին: Այդ պահին Վեհափառին հաղորդված տվյալների համաձայն, զոհվել էր միայն ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանը և ծանր վիրավորվել ՀՀ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանը: Ուստի և Գարեգին Բ նորընտիր Հայրապետի անդրանիկ խոսքը, բնականաբար, ուղղորդվեց Ազգային Ժողովում տեղի ունեցած ողբերգությանը.

Կարծում եմ, սա մի առիթ է նաև՝ անդրադառնալու Հայ Եկեղեցու դերին և առաքելությանը մեր ժողովրդի կյանքում, որ Հայ Եկեղեցին պետք է միշտ զորավիգ լինի Հայոց պետությանը, պետք է համագործակցություն լինի Հայոց Եկեղեցու և Հայոց պետականության միջև: Պատմությամբ է փաստված, որ Եկեղեցու և պետության համագործակցությունը միշտ էլ ազգաշահ է, միշտ էլ հայրենաշեն է: Ես ուզում եմ, որ մենք բոլորս աղոթքի կանգնենք այս պահին Հանրապետության վարչապետի հոգվույն համար և մեր աղոթքը առ Աստված բարձրացնենք և նաև հայցելու, որ Աստված կյանք պարգևի ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանին: